ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 682-22
ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

ք. Երևան 17 11 2022 թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն), ի դեմս Նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Արմինե Խառատյանի ով գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից և «ՏՐԻՆՏԻ» ՍՊԸ-ն (գրանցման համար 286.110.779036) ի դեմս տնօրեն Հովակիմ Սաղաթելյանի (անձնագիր AT 0413521, տրվ. 13.03.2020թ., 011-ի կողմից), (այսուհետ՝ Շահառու) մյուս կողմից, (այսուհետ միասին՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 29-ի «Հայաստանի Հանրապետության խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» N 361-Լ որոշումը (այսուհետ՝ Որոշում) և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն Պայմանագրով Շահառուն «Հայաստանի Հանրապետության խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում հիմնում է ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող խաղողի այգի, իսկ Նախարարությունը պարտավորվում է հիմնած այգու դիմաց տրամադրել Ծրագրով սահմանված փոխհատուցում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. **Նախարարությունն իրավունք ունի՝**

2.1.1. իրականացնել ծրագրի մոնիթորինգ:

2.1.2. Պայմանագրի 2.4.2 կետի դրույթը խախտելու դեպքում պահանջել Շահառուից ՀՀ պետական բյուջե վերադարձնել տրամադրված փոխհատուցման գումարը:

2.2. Նախարարությունը պարտավոր է՝

2.2.1. Սույն Պայմանագրով Նախարարությունը պարտավորվում է կատարել Շահառուի կողմից ՀՀ Վայոց ձորի մարզի, Արենի համայնքի, Աղավնաձոր բնակավայրում /վկայական N 24082022-10-0027, 23052020-10-0017, 24082022-10-0025, 23052020-10-0029, 24082022-10-0008, 24082022-10-0002, 24082022-10-0004, 24082022-10-0028, 23052020-10-0013, 24082022-10-0024, 24082022-10-0026/ 3,91335 հա մակերեսով

հիմնված այգու համար կատարված փաստացի ծախսերի (առանց առաջին տարվա խնամքի ծախսերի) մասնակի փոխհատուցում, Ծրագիր 24-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված չափաքանակով:

2.2.2. Փոխհատուցման ենթակա գումարը փոխանցել Շահառուի հաշվեհամարին համապատասխան սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

2.2.3. Իրականացնել մոնիթորինգ, առնվազն տարին մեկ անգամ:

2.3. Շահառուն իրավունք ունի՝

2.3.1. Ծրագրի շրջանակներում հիմնել նվազագույնը 0,5, առավելագույնը 10 հա այգի (կամ հատապտղանոց)

2.3.2. ստանալ Ծրագրի համապատասխան փոխհատուցում Պայմանագրի 1.1. կետին համապատասխան՝ 2.2.2. կետով սահմանված ժամկետում:

2.4. Շահառուն պարտավոր է՝

2.4.1. այգեհիմնումն իրականացնել Ծրագրի չափորոշիչներին համապատասխան:

2.4.2. այգին առնվազն հինգ տարի օգտագործել նպատակային,

2.4.3. Պայմանագրի 2.4.2 կետի դրույթը խախտելու դեպքում ծրագրի շրջանակներում տրամադրված փոխհատուցման գումարը վերադարձնել ՀՀ պետական բյուջե, այդ մասին ծանուցումն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում:

2.4.4.Պայմանագրի 2.4.2. կետով սահմանված գույքը պայմանագրի գործողության ընթացքում չօտարել այլ անձանց:

2.4.5. Պայմանագրի 2.4.2 կետով սահմանված գույքի նկատմամբ պայմանագրի գործողության ընթացքում այլ գրանցում հայցել միայն Նախարարության համաձայնությամբ:

2.4.6. Տարին մեկ անգամ ներկայացնել հաշվետվություն արդյունքների և այգու վիճակի վերաբերյալ:

2.4.7 Իրականացնել Պայմանագրի 10.2. պահանջը և կատարման մասին գրավոր հայտնել Նախարարությանը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի շրջանակներում Շահառուին տրամադրվող փոխհատուցման գումարի չափը կազմում է 13109722 (տասներեք միլիոն հարյուր ինը հազար յոթ հարյուր քսաներկու) ՀՀ դրամ կատարված փաստացի ծախսերի (առանց առաջին տարվա խնամքի ծախսերի) մասնակի փոխհատուցում, Ծրագիր 24-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված չափաքանակով:

3.2. Ծառայության մատուցման գինը կայուն է և Շահառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Նախարարությունը նվազեցնելու այդ գինը:

3.3. Նախարարությունը 3.1. կետով նշված փոխհատուցման ենթակա գումարը փոխանցում է Շահառուի հաշվարկային հաշվին անկախիկ եղանակով:

4. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

4.1. Նախարարությունը Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Շահառուին տրվում են գրավոր ցուցումներ և առաջարկություններ:

4.3. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է Ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

4.4. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Շահառուից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Սույն Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Պայմանագիրը կարող է փոփոխվել և լուծվել կողմերի համաձայնությամբ: Պայմանագրի փոփոխման կամ լուծման վերաբերյալ համաձայնությունը կնքվում է գրավոր:

7.2. Շահառուն իրավունք ունի մինչև պետական աջակցություն ստանալը ցանկացած ժամանակ հրաժարվել դրանից: Այդ դեպքում Պայմանագիրը համարվում է լուծված:

8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

9.1. Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

10. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

10.1. Սույն Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երեք օրինակից, 4 էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

10.2. Սույն պայմանգիրը գործում է 5 (հինգ) տարի ժամկետով, որը հիմք է պայմանագրի գործողության ընթացքում «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն գույքի նկատմամբ օտարման սահմանափակում կիրառելու համար:

11. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 ՀՎՀՀ 02698604 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011033223	Շահառու «ՏՐԻՆՏԻ» ՍՊԸ Հասցե՝ Աբովյան փ. /2/32/9 կենտրոն 0010 Երևան Հայաստան ՀՎՀՀ 02620569 «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Հ/Հ 163007053651 Հովակիմ Սաղաթելյան անձնագիր AT 0413521, տրվ. 13.03.2020թ., 011-ի կողմից Հեռ. +374 91 22 73 37
Ա. Խառատյան (ստորագրություն)	Հ. Սաղաթելյան (ստորագրություն)